



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» հոկտեմբեր 2012 թ.

N 93-Ն/1

**<<ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԶԳԱՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԱԲԱԺԱՆՎԱԾ ՑՈՒՑԻՉՆԵՐ>>
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի դ) ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի նիստի N2 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած <<Գենդերային քաղաքականության 2012 թվականի միջոցառումների տարեկան ծրագրի>> 2-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել <<Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ>> մեթոդական ձեռնարկը՝ համաձայն հավելվածի:
2. Նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ Լ. Ղազարյանին՝ մեթոդական ուղեցույցը տրամադրել գենդերային հիմնախնդիրներով զբաղվող շահագրգիռ մարմիններին և ձեռնարկել քայլեր <<Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչների>> ներդրմանն ուղղված ուսուցողական դասընթացեր կազմակերպելու նպատակով:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ֆ. Բերիկյանի վրա:



Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2012թ. Հոկտեմբերի 19-ի թիվ93-Ա/1 հրամանի

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԶԳԱՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԱԲԱԺԱՆՎԱԾ ՑՈՒՑԻՉՆԵՐ

Մեթոդական ձեռնարկ

Բովանդակություն

Ներածություն

Գլուխ 1. Գենդերային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում:

Գլուխ 2 . Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչների մշակման սկզբունքներն ու մեթոդաբանությունը:

Գլուխ 3. Գենդերային իրավիճակի վերլուծության գործիքները:

Գլուխ 4. Գենդերային վիճակագրության անհրաժեշտությունը:

Գենդերային զգայուն ցուցիչները և դրանց օգտակարությունը:

4.1. Գենդերային վիճակագրության խնդիրները:

4.2. Ինչ է ցուցիչը: Ցուցիչների ընտրության չափանիշները և տեսակները:

Գլուխ 5. Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչների օրինակներ:

Գլուխ 6. Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ:

Ներածություն

Հասարակության մեջ կանայք և տղամարդիկ ունեն տարբեր դերեր և պարտականություններ, ռեսուրսների և բարիքների տարբեր մատչելիություն, ինչի արդյունքում պետության քաղաքականությունը, օրենսդրությունը և ծրագրերը նրանց վրա ազդում են տարբեր ձևերով: Զարգացմանն ուղղված ռազմավարությունները պետք է հաշվի առնեն այդ տարբերությունները և ներառեն գենդերային մոտեցումներ:

Կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման ոլորտում գենդերային տարբերությունների ուսումնասիրությունը վկայում է, որ գենդերային անհավասարության հիմքը տնտեսական ոլորտում կանանց և տղամարդկանց անհավասար վիճակն է, և հասարակության մեջ պահպանվող, ու նույնիսկ ամրապնդվող, գենդերային դերերի ավանդական բաժանումը: Ակնհայտ է, որ նման իրավիճակի փոփոխությունը հնարավոր է միայն հասարակության և նրա ինստիտուտների վրա երկարատև ազդեցություն գործող համալիր միջոցառումների իրականացման միջոցով:

Հասարակության մեջ և տնտեսական կյանքում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման ոլորտում առկա անհավասարությունը հիմնականում պայմանավորված է ոչ միայն մշակութային ավանդույթներով ու սոցիալ-տնտեսական իրավիճակով, այլև իրականացվող քաղաքականության մեջ գենդերային բաղադրիչի, գենդերային գաղափարախոսության՝ հետևաբար նաև ողջ հասարակությունում գենդերային մտածելակերպի բացակայությամբ:

Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնախնդիրը, հանրային ոլորտում կանանց հնարավորությունների ընդլայնումը, պետական նպատակային քաղաքականության մշակումը այն հիմնական ռազմավարական նպատակներն են, որոնք ընդգրկված են ինչպես միջազգային՝ Պեկինյան գործողությունների ծրագիր, Հազարամյակի զարգացման նպատակներ և ՄԱԿ-ի <<Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին>> կոնվենցիա, այնպես էլ տեղական՝ ՀՀ կառավարության գործունեության 2008-2012թթ. ծրագիր, ՀՀ կառավարության կողմից արձանագրային

որոշմամբ հաստատված Գենդերային քաղաքականության հայեցակարգ, ՀՀ Կայուն զարգացման ծրագիր, փաստաթղթերում:

Դրանք ենթադրում են խտրականությունից զերծ մոտեցումների և քաղաքականության մշակում, բարեփոխումների իրականացում և դրանց հսկողության նպատակով բավարար միջոցների տրամադրում:

Ցանկացած հասարակությունում հավասարակշռված գենդերային իրավիճակի հաստատումն ու կառավարումը հնարավոր է որակյալ գենդերային վիճակագրության առկայության դեպքում: Իսկ վերջինս հնարավոր է, եթե առկա են դրա գործիքները՝ այն է գենդերային զգայուն տարաբաժանված ցուցիչները:

Այդ նպատակին է միտված սույն ձեռնարկի մշակումը:

Ձեռնարկը ներառում է հետևյալ բաժինները.

- Գենդերային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում:
- Գենդերային զգայուն տարաբաժանված ցուցիչների մշակման սկզբունքներն ու մեթոդաբանությունը:
- Գենդերային իրավիճակի վերլուծության գործիքները:
- Գենդերային վիճակագրության անհրաժեշտությունը: Գենդերային զգայուն ցուցիչները և դրանց օգտակարությունը:
- Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչների օրինակներ:
- Կայուն զարգացման ծրագրի մշտադիտարկման գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ

Գլուխ 1. Գենդերային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում

1993 թվականին, Հայաստանի ՄԱԿ-ի անդամ դառնալուց հետո, օրենսդիր իշխանությունը վավերացրել է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, որը պարտավորեցնում է այն վավերացրած բոլոր պետություններին ամրագրել տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքը սահմանադրություններում և այլ օրենսդրական ակտերում ու հասնել դրա գործնական իրականացմանը:

Պեկինյան հռչակագիրը և Պեկինյան գործողությունների ծրագիրը (1995թ.) վեր են հանում գլխավոր հիմնախնդրային ոլորտները, որտեղ նշվում է «գենդերը օրենսդրության, հասարակական քաղաքականության մեջ, ծրագրերում և նախագծերում ներդնելու անհրաժեշտությունը», ինչպես նաև «ազգային մեխանիզմների և պետական այլ կառույցների ստեղծման կամ ուժեղացման» և այդ կապակցությամբ «բարեփոխումների իրականացման գործընթացի մշտադիտարկման համար բավարար ռեսուրսների բաշխման» անհրաժեշտությունը:

Հազարամյակի զարգացման նպատակները մշակվել են Հազարամյակի հռչակագրի (2000թ.) հիման վրա, որը մեկ անգամ ևս հաստատում է գենդերային հավասարության դերի կարևորությունը:

2010թ. փետրվարին ՀՀ կառավարության կողմից ընդունած Գենդերային քաղաքականության հայեցակարգը սահմանում է կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններն ու ընդհանուր ռազմավարությունը և ուղղված է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում բոլոր քաղաքացիների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը՝ անկախ սեռից:

Հայեցակարգը հիմնված է ՀՀ Սահմանադրության և օրենքների, Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի, ինչպես նաև ուղղորդիչ այլ միջազգային քաղաքական փաստաթղթերի վրա: Հայեցակարգի հիմքում ընկած է այն գաղափարը, որ ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության ձևավորման նախադրյալը գենդերային հավասարությունն է, որը ժողովրդավարական

գերակա արժեք է, մարդու հիմնարար իրավունքներից մեկը և սոցիալական արդարության հասնելու նախապայման:

Գենդերային հավասարությունը նպաստում է երկրի կայուն զարգացմանը, ժողովրդավարական գործընթացների խորացմանը և հասարակության կենսագործունեության կազմակերպմանը՝ բոլոր սոցիալական խմբերի իրական հավասարության, համերաշխության, համագործակցության և հանդուրժողականության հիման վրա, մարդկային ներուժի արդյունավետ օգտագործմանը և կյանքի որակի բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետությունը ֆորմալ իրավաբանական տեսանկյունից վավերացրել է գենդերային ուղղվածության գրեթե բոլոր միջազգային իրավական ակտերը և որպես ՄԱԿ-ի ու Եվրախորհրդի անդամ և Եվրոպայի ինտեգրմանը միտված անկախ պետություն, ստանձնել է որոշակի պարտավորություններ՝ ոչ միայն վավերացնել միջազգային կարևորագույն իրավական փաստաթղթերը, այլև համաձայնեցնել ազգային օրենսդրությունն այդ փաստաթղթերի դրույթներին:

Ելնելով վերոհիշյալ պարտավորություններից, ինչպես նաև կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ամրագրման սկզբունքից, հանրապետությունում անկախացումից հետո իրականացվել և շարունակում են իրականացվել օրենսդրական դաշտի բարեփոխումներ:

Երկրի հիմնական օրենքը՝ 1995 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սահմանում է մեր երկրում մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները: 2005 թվականին խմբագրված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ոչ միայն պահպանվել են անկախ սեռից խտրականության արգելումը՝ տղամարդկանց և կանանց հավասար իրավունքները ամուսնանալիս, ամուսանական կյանքի ընթացքում և ամուսնալուծվելիս, այլ նաև կատարելագործվել են ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանությանը վերաբերվող դրույթները:

Օրենքների ընդունմանը (փոփոխությանը) զուգահեռ մշակվել են նաև ենթաօրենսդրական ակտեր, որոնք ապահովում են այս կամ այն օրենքի կիրարկումը: Սակայն վերը թվարկված փաստաթղթերի մեծ մասն ուժի մեջ են մտել համեմատաբար վերջերս, շատերը չեն անցել գենդերային փորձաքննություն և ազգային օրենսդրության բարեփոխումների այս գործընթացը դեռևս չի հանգեցրել կանանց և տղամարդկանց

փաստացի հավասարությանը, քանզի հռչակել իրավահավասարություն դեռ չի նշանակում ապահովել դրա փաստացի իրականացումը: Վերապահվող իրավունքներն անհրաժեշտ պայման են, բայց ոչ բավարար: Փաստացի իրավահավասարությունը չափվում է ձեռք բերվող արդյունքներով, որոնք ենթադրում են ոչ միայն հավասար իրավունքների հռչակում, այլև հավասար հնարավորությունների ընձեռում և ռեսուրսների հավասար մատչելիություն: Բացի այդ, ներկայացուցչական ժողովրդավարությունը թելադրում է հասարակության բոլոր սոցիալական խմբերի և խավերի հավասար մասնակցություն պետության կառավարմանը: Իսկ տղամարդկանց և կանանց հավասար մասնակցության ապահովումը դիտվում է որպես ժողովրդավարացման գործընթացի անբաժանելի մաս:

Հռչակված նորմերը գործնական քաղաքականության մաս դառնալու համար անհրաժեշտ է քաղաքականության իրականացումն ու ռազմավարությունը համապատասխանեցնել այդ փաստթղթերի տառին և ոգուն:

Համաձայն Պեկինյան համաժողովի ամփոփիչ նյութերի մշակվեցին և ՀՀ կառավարության կոմից ընդունվեցին 15.04.1998թ. N 242 <<Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման ծրագրի հիմնադրույթների մասին>> և 26.06.1998թ. N 406 <<Հայաստանի Հանրապետությունում 1998-2000թթ. կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագրիը հաստատելու մասին>> որոշումները:

2004թ. ապրիլի 8-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց <<Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագիրը և Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին>> N645-Ն որոշումը:

Վերոհիշյալ ծրագրով նախանշված խնդիրների շարունակականությունն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ Կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի նիստում հավանության է արժանացել <<Գենդերային քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին>> N5 արձանագրային որոշումը:

Վերջին տարիներին ՀՀ-ում պետական բյուջեի միջոցներով իրականացվում է ծրագրային ֆինանսավորում: Բյուջեի ծախսերի նկատմամբ վերահսկողություն

իրականացնելու, ինչպես նաև պետական ծախսերի կառավարման համակարգի գնահատման համար՝ որպես սկզբունք ՀՀ-ում կիրառվում են համապատասխան ծրագրի իրականացման համար պահանջվող, հատկացված և օգտագործված ռեսուրսների ցուցիչները: Նման ցուցիչները և դրանց համադրումները ի վիճակի չեն տալ լիարժեք տեղեկատվություն ինչպես վերլուծողին, այնպես էլ՝ որոշումներ ընդունող քաղաքական պաշտոնյաներին՝ ծրագրի նպատակների, դրանց հասնելու համար առաջարկվող ուղիների, սպասվելիք արդյունքների և ընդհանրապես ծրագրի տնտեսական և սոցիալական արդյունավետության մասին՝ առավել ևս գենդերային տեսանկյունից:

Ֆինանսական ցուցիչներին զուգահեռ սկսեցին կիրառվել նաև մի շարք ոչ ֆինանսական ցուցիչներ, որոնք պետք է հնարավորություն տային գնահատելու պետության կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետությունը և որակը: Սակայն դեռևս ոչ բոլոր ծրագրերի համար են մշակված քանակական և որակական ցուցիչներ և ոչ բոլոր մշակված ցուցիչների համար են նախանշված տեղեկատվության հավաքագրման մեխանիզմներ:

Վերը նշվածը առավելապես վերաբերվում է գենդերային իրավիճակի գնահատման սահմանափակումներին՝ գենդերային զգայուն ցուցիչների սակավությանը, ինչպես նաև որոշ ոլորտներում դրանց բացակայությանը:

Բյուջետային ծրագրերի կազմման և կատարման արդյունքների ներկայացման ձևաչափը պետք է արտացոլի ոչ այնքան ծրագրային ծախսերի կառուցվածքն՝ ըստ դրանց տեսակների (աշխատանքի վարձատրություն, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումներ և այլն), որքան այդ ծրագրերի իրականացումից ակնկալվող արդյունքները երկու սեռերի համար հավասարապես:

Որպես ճիշտ ռազմավարական որոշումներ կայացնելու նախապայման՝ անհրաժեշտ է մշակել և ներդնել գենդերային զգայուն մշտադիտարկման ցուցիչների համակարգ՝ պետական ծրագրերի արդյունավետության, երկու սեռերի համար հավասարապես հասանելիության և մատչելիության գնահատման, պետական սոցիալական պաշտպանության ծրագրերի հասցեականության ապահովման նպատակով:

Միաժամանակ անհրաժեշտ է նաև իրականացնել որակյալ, գենդերային տարաբաժանումն ապահովող, վիճակագրական տվյալների հավաքագրման համար

համապատասխան ձևաչափերի և մեթոդաբանության մշակում ու ներդրում, ինչը որակյալ վիճակագրական հաշվետվություններ օգտագործելու միջոցով կհզորացնի Կառավարության մշտադիտարկում իրականացնելու կարողությունները: Այն կօգնի նաև Կառավարությունում տարբեր մակարդակներում որոշումներ կայացնողներին՝ գենդերային զգայուն քաղաքականություն մշակելու գործում, ինչպես նաև կնպաստի երկրի Կայուն զարգացման ծրագիրը պարբերաբար վերանայելուն: Մինչդեռ գենդերային տարաբաժանված վիճակագրական տվյալների և գենդերային մշտադիտարկման բացակայությունը թույլ չի տալիս կայացնել լիարժեք որոշումներ և բարելավել պետական ծրագրերի հասցեականությունը: Արդյունքում, օրինակ՝ կանայք, ովքեր ամենաշատն են տուժում տնտեսական ճգնաժամի հետևանքներից, լիարժեք չեն օգտվում պետական աջակցության ծրագրերից:

Այս իմաստով ավելի է կարևորվում պետական գենդերային վիճակագրության կարողությունների հզորացմանն ուղղված բարեփոխումների իրականացումը ու հաշվետվողականության և գենդերային մշտադիտարկման համակարգի ընդլայնումը:

Չնայած վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության Կառավարությունն էական առաջընթաց է ունեցել վիճակագրական հաշվետվության որակի բարելավման և իր սեփական ծրագրերի (ԱՀՌԾ և Միջնաժամկետ ծախսային ծրագրեր), ինչպես նաև դոնոր երկրների զարգացման ծրագրերի (2004-2007թթ. արդյունքների վրա հիմնված ԱՀՌԾ և 2004-08 CAS) արդյունավետ իրագործմանն ուղղված համապատասխան մշտադիտարկման համակարգի մշակման գործում, այնուամենայնիվ, մինչ այժմ իրականացված ծրագրերից քչերն են ունեցել մշտադիտարկման գենդերային տարաբաժանված ցուցիչներ, որոնք կօգնեն որոշումներ կայացնողներին գնահատել բոլոր ոլորտներում իրականացվող քաղաքականությունների ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա, ինչպես նաև կբարելավեն երկրի աղքատության գնահատման և հանրային ծախսերի ստուգման վերլուծության որակը:

Կայուն զարգացման ծրագիրը ևս նախատեսում է ունենալ մշտադիտարկման և գնահատման համապարփակ և միասնական համակարգ, որը կներառի նաև ըստ սեռի տարաբաժանված ցուցիչներ: Բացի առանձին ոլորտների ցուցիչների, կառավարությունը նախատեսում է մշակել համապարփակ գենդերային ցուցիչներ:

Պետական ծրագրերի մշտադիտարկման գենդերային ցուցիչների, դրանց ներկայացման ձևաչափերի մշակման գործընթացում ընդգրկված են եղել կառավարության առանցքային մարմինները՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը:

Գլուխ 2. Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչների մշակման սկզբունքներն ու մեթոդաբանությունը

Առաջարկվող ձեռնարկը գենդերային զգայուն ցուցիչների կիրառման անհրաժեշտությունը հիմնավորող և երկրում գենդերային քաղաքականության իրականացման արդյունավետության չափման անհրաժեշտ գործիք է:

Ձեռնարկում նախանշվում են, թե ինչպես ճիշտ և արդյունավետ կարելի է կիրառել գենդերային զգայուն ցուցիչները, որպեսզի գնահատող այլ տեխնիկաների հետ համատեղ հնարավոր լինի բացահայտել երկու սեռերի ինտեգրման աստիճանը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Ձեռնարկը չի հավակնում տալ ցուցիչների հետ կապված բոլոր հարցերի պատասխանները: Այն մշակված է որպես մի փաստաթուղթ, որը երաշխավորում է ցուցիչների այնպիսի կիրառումը, որ հինարավոր լինի բացահայտել և վերլուծել հայ հասարակության մեջ առկա գենդերային իրավիճակը: Արդյունքում հնարավոր կլինի իրականացնել գենդերային զգայուն և հավասարակշռված քաղաքականություն:

Ձեռնարկի նպատակն է.

- Նպաստել գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչների մշակման մեթոդաբանության ներդրմանը:
- Առաջարկել երաշխիքներ և ուղղություններ գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչների կիրառման համար:

Ելնելով վերը նշված նպատակներից մշակվել է գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչների ներդրման համապատասխան ձևաչափը: Այն բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- *ոլորտ.*
- *ենթաոլորտ.*
- *ցուցիչն ըստ սեռի (կին/տղամարդ).*
- *ցուցիչի հավաքագրման պատասխանատու.*
- *ցուցիչի հավաքագրման ձևաչափ.*
- *վերջնական տեղեկատվության տրամադրման պատասխանատու.*
- *առկա ցուցիչներ.*
- *առաջարկվող ցուցիչներ.*
- *հավաքագրման պարբերականություն:*

Որպես փորձնական ընտրվել են Կայուն զարգացման ծրագրում¹ ընդգրկված և Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող 5 ոլորտներ՝ էկոնոմիկա, սոցիալական պաշտպանություն, կրթություն, առողջապահություն և գյուղատնտեսություն: Յուրաքանչյուր ոլորտում առանձնացվել են կարևորագույն ենթաոլորտները:

Մշակված են յուրաքանչյուր ենթաոլորտը նկարագրող թե՛ քանակական, և թե՛ որակական ցուցիչները: Ամեն ցուցիչի համար նշված է հավաքագրման աղբյուրը և հավաքագրման համար պատասխանատու կառույցը:

Բազմակողմանի վերլուծվել են յուրաքանչյուր ենթաոլորտում առկա և հավաքագրվող գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչները և դրանց հավաքագրման ձևաչափերը: Գործող գենդերային ցուցիչների վերլուծությունը ցույց է տվել, որ դրանք բավարար չեն յուրաքանչյուր ոլորտի գենդերային իրավիճակի ամբողջական պատկերը ստանալու համար:

Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջացել մշակել նոր ցուցիչներ ու դրանց հավաքագրմանը համապատասխանող նոր ձևաչափ, որտեղ նույնպես նշված են ինչպես հավաքագրման պատասխանատուները, այնպես էլ հավաքագրման աղբյուրները:

¹ Ը ն դ ու ն 2008 թ վե ս կ ան ի հ ո կ օ ի ն չ բ Ե ր կ ի ա ռ ավ ար թ 1207 յ Ն ա ի ռ ո շ մ : ա մ ք

Առաջարկվող ցուցիչների հավաքագրումը ենթադրում է արդեն գոյություն ունեցող հաշվետվական ձևերի որոշակի փոփոխություն կամ լրացում, ինչպես նաև նոր ցուցիչների հավաքագրման համար հետազոտությունների անցկացում:

Նոր ձևաչափում թե՛ առկա, և թե՛ առաջարկվող ցուցիչների համար նշված է նաև հավաքագրման պարբերականությունը:

Բաղադրիչների ամբողջական կիրառումը հնարավորություն կտա լիովին բացահայտելու տվյալ ոլորտում առկա գենդերային իրավիճակը:

Համապատասխան ոլորտի ցուցիչները մշակելու համար յուրաքանչյուր ոլորտի պատասխանատու գերատեսչություններից ընտրվել են մասնագետներ (բաժնի պետերի մակարդակով):

Առաջարկվող ձևաչափի շրջանակներում գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչների հավաքագրումը ոչ միայն հնարավորություն կտա ճիշտ պատկերացում կազմելու հայ հասարակությունում գենդերային իրավիճակի շարժընթացի փոփոխության վերաբերյալ, այլև կնպաստի հասարակական կյանքի տարբեր ոլորտներում գենդերային զգայուն քաղաքականության մշակմանը և իրականացմանը:

Գլուխ 3. . Գենդերային իրավիճակի վերլուծության գործիքները

Գենդերային իրավիճակի վերլուծության լավագույն գործիքներ են.

1) Գենդերային վիճակագրությունը. սեռային բաշխմամբ վիճակագրությունն է, որն արտացոլում է սոցիալ-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց համապատասխան դիրքը և հասարակության մեջ առկա գենդերային հիմնախնդիրներն ու հարաբերությունները: Այն գենդերային զգայուն ցուցիչների ամբողջություն է, որն ունի յուրահատուկ գործառույթ՝ հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների բացահայտում՝ կապված ժամանակի ընթացքում իրականացվող գենդերային փոփոխությունների հետ: Նման ցուցիչների օգտակարությունը պայմանավորված է նրանով, որ դրանք մատնանշում են ժամանակի ընթացքում հասարակությունում կանանց և տղամարդկանց կարգավիճակի մեջ տեղի ունեցող փոփոխությունները:

2) Գենդերային հավասարությունը. կանանց և տղամարդկանց հավասար իրավական

կարգավիճակը և դրա իրականացման համար հավասար հնարավորություններն են, որոնք անկախ սեռից՝ հնարավորություն են ընձեռում անձանց ազատորեն կիրառելու իրենց ունակությունները քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակույթի և հասարակական կյանքի այլ ոլորտներում մասնակցություն ունենալու համար:

- 3) **Գենդերային վերլուծությունը.** հասարակության մեջ կանանց և տղամարդկանց կարգավիճակի վրա՝ հասարակական կյանքի համապատասխան ոլորտներում գործող կամ նախաձեռնվող ծրագրերի, իրավական ակտերի, պետական քաղաքականության տարբեր ներգործությունների գնահատման գործընթացն է:

Գլուխ 4. . Գենդերային վիճակագրության անհրաժեշտությունը:

Գենդերային զգայուն ցուցիչները և դրանց օգտակարությունը

4.1. Գենդերային վիճակագրության խնդիրները

Գենդերային վիճակագրությունն ըստ սեռի վիճակագրական տվյալների արհեստական բաժանում չէ, այլ փոխկապակցված համակարգ, որը հնարավորություն է տալիս ոչ միայն օպերատիվ և համակարգված հիմքով համարժեքորեն արտացոլել հասարակության մեջ կանանց և տղամարդկանց կարգավիճակի առանձնահատկությունները, այլև կենսագործունեության բոլոր ոլորտներում բացահայտել գենդերային դերերի և կարծրատիպերի ազդեցությունը:

Գենդերային վիճակագրության խնդիրներն են.

- կենսագործունեության բոլոր ոլորտներում ներկայացնել կանանց և տղամարդկանց կարգավիճակը, գենդերային դերերի և գենդերային կարծրատիպերի ազդեցությունը.
- հնարավորություն ընձեռել լուսաբանելու գենդերային հիմնախնդիրների հետազոտությունը.
- հնարավորություն ընձեռել իրականացնելու միջազգային համադրումներ.

- ապահովել կանանց և տղամարդկանց օրենքներով սահմանված իրավունքների, կառավարության որոշումների, ինչպես նաև հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների քաղաքականության իրականացման վերաբերյալ հսկողություն և արդյունավետության գնահատում:

Գենդերային վիճակագրության առանձնահատկությունները կայանում են նրանում, որ այն իրենից ներկայացնում է առանձին, բայց ոչ ինքնուրույն ոլորտ, այն լրացնում է վիճակագրության բոլոր բնագավառները:

Անկասկած գենդերային ազգային վիճակագրությունը պետք է զարգանա հաշվի առնելով միջազգային փորձը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ գենդերային ազգային վիճակագրության կատարելագործման ընթացքում միջազգային չափորոշիչները կարևոր են առաջին հերթին որպես կողմնորոշիչներ և տվյալների ներկայացման և հավաքագրման մոդել:

Գենդերային վիճակագրությանը ներկայացվող կարևորագույն պահանջ է **օպերատիվությունը**: Հանրապետությունում տեղի ունեցող տնտեսական և սոցիալական անընդհատ փոփոխությունները ուղեկցվում են գենդերային նոր հիմնախնդիրների առաջացմամբ, որին նպաստում են նաև օրենսդրության փոփոխությունները: Նման իրավիճակում խոչընդոտների և դժվարությունների վերաբերյալ օպերատիվ և համարժեք տեղեկատվության բացակայությունը, որոնց բախվում են կանայք և տղամարդիկ, կարող է խոչընդոտ լինել գենդերային հիմնախնդիրների լուծման վերաբերյալ վարչական և քաղաքական որոշումների, ծրագրերի և միջոցառումների մշակման և արդյունավետության գնահատման գործընթացներում:

Վիճակագրության մեջ կանայք և տղամարդիկ պետք է **<<տեսանելի>>** լինեն: Վիճակագրությունը պետք է արտահայտի կանանց և տղամարդկանց տեղն ու դերը հասարակությունում՝ հաշվի առնելով իրենց որպես սոցիալ-ժողովրդագրական առանձնահատուկ խմբերի, ինչպես նաև հասարակության մեջ կանանց և տղամարդկանց համար առկա տարբեր սոցիալ-տնտեսական իրողությունները: Այն նպատակ ունի չեզոք հիմքեր սահմանել սեռային հավասարության և կանանց հնարավորությունների ընդլայնման ճանապարհին համեմատություններ կատարելու և առաջընթացը գնահատելու համար: Սեռային բաշխմամբ վիճակագրությունը կարևոր գործիք և ուղեցույց է գենդերային քաղաքականություն մշակողների և ոլորտի ակտիվիստների

համար: Բացի այդ, ներկայացված տվյալները պետք է լինեն համապարփակ և ղյուրընթեռնելի:

4.2. Ինչ է ցուցիչը: Ցուցիչների ընտրության չափանիշները և տեսակները

Գենդերային վիճակագրությունը ապահովելու նպատակով առավել արդիական և արդյունավետ է դառնում գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչների կիրառումը: Գլխավոր ռազմավարությունը, որը հիմնված է հենց նման ցուցիչների հավաքագրման վրա բաղկացած է քանակական և որակական ցուցիչների հավաքագրման համակցված մեթոդից, որը հնարավորություն է տալիս ժամանակի ընթացքում չափելի դարձնել հասարակության մեջ տեղի ունեցող գենդերային փոփոխությունները:

Ցուցիչ` քանակական կամ որակական բնույթի գնահատման գործոն: Ցուցիչը կարող է լինել չափող գործիք, թիվ, փաստ, կարծիք կամ դատողություն, որը ցույց է տալիս յուրահատուկ կարգավիճակ կամ իրավիճակ և ամրագրում է ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները այդ կարգավիճակում կամ իրավիճակում:

Ցուցիչների ընտրության չափանիշներն են.

- Ցուցիչների մշակմանը պետք է մասնակցեն բոլոր շահագրգիռ կողմերը.
- Ցուցիչները պետք է համապատասխանեն օգտագործողների կարիքներին.
- Ցուցիչները պետք է լինեն տարաբաժանված ըստ սեռի.
- Անհրաժեշտ է օգտագործել և քանակական, և որակական ցուցիչներ.
- Ցուցիչները պետք է լինեն հասկանալի և պարզ ձևակերպված.
- Ցուցիչները պետք է լինեն հավաքագրելի.
- Անհրաժեշտ է սահմանել և պահպանել ցուցիչների հավաքագրման պարբերականությունը.
- Հիմնական ուշադրությունը պետք է դարձնել արդյունքը չափող ցուցիչների վրա:

Քանակական ցուցիչը բնորոշվում է որպես քանակի չափման միավոր, ինչպես, օրինակ, բնակչության թվաքանակը, հաշմանդամություն ունեցող զբաղվածների թվաքանակը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվաքանակը և այլն:

Որակական ցուցիչը բնորոշվում է որպես տվյալ առարկայի կամ խնդրի վերաբերյալ մարդկանց դատողությունները կամ պատկերացումները, ինչպես, օրինակ, ծառայությունից օգտվողների գոհունակությունը կամ դժգոհությունը ծառայության որակից:

Քանակական և որակական ցուցիչների էական տարբերությունը նրանում է, որ դրանք ստացվում են տեղեկատվական տարբեր աղբյուրներից:

Քանակական ցուցիչները հեշտ չափելի են, քանի որ ստացվում են պաշտոնական աղբյուրներից՝ ինչպես, օրինակ, մարդահամարի տվյալները, տարբեր վարչական հաշվետվությունները և այլն:

Որակական ցուցիչներն արտահայտում են մարդկանց տարբեր ընկալումները, դիրքորոշումներն ու տեսակետները: Դրանք հիմնականում ստացվում են այնպիսի տեղեկատվական աղբյուրներից, ինչպիսիք են՝ հասարակական կարծիքի ուսումնասիրությունները, հարցումները, հարցազրույցները, ներգրավված դիտարկումը, սոցիոլոգիական կամ մարդաբանական հետազոտությունները:

Ընդունված է քանակական ցուցիչներն անվանել <<կոշտ>> կամ <<օբյեկտիվ>>, իսկ որակականը՝ <<փափուկ>> կամ <<սուբյեկտիվ>>:

Իրականում ցուցիչների այս երկու տեսակները լրացնում են մեկը մյուսին՝ հնարավորություն ընձեռելով իրականացնել առավել արդյունավետ մշտադիտարկում և գնահատում: Սա հիմնավորվում է նրանով, որ դրանք կարող են հաստատել կամ մատնացույց անել իրար հետ խաչվող հիմնախնդիրները:

Ընտրված ցուցիչները պետք է բավարարեն 2 պահանջ՝ ստույգությունը կամ վավերականությունը և հավաստիությունը:

Ստույգություն կամ վավերականություն ասելով հասկանում ենք, որ կիրառվող ցուցիչները պետք է լինեն ճշգրիտ ու պարբերական:

Հավաստիություն նշանակում է, որ այն տեղեկատվությունը, որ պարունակում է ցուցիչներ, պետք է համապատասխանի իրականությանը:

Ցուցիչները կարող են հավաստի լինել, եթե հավաքագրման նպատակով կիրառվող գործիքները՝ բազմաթիվ անգամ օգտագործելիս, տալիս են նույն

արդյունքները:

Ընտրված քանակական և որակական ցուցիչները պետք է բավարարեն հենց այս պահանջները:

Ընդհանրապես, ցուցիչները՝ որպես սոցիալական շարժի չափման գործիքներ, նպաստում են համապատասխան ոլորտների նպատակային քաղաքականությունների մշակմանը: Գենդերային հիմնահարցերով զբաղվող մասնագետները ընդգծում են, որ բավական երկար ժամանակ տարբեր ոլորտներում կիրառվող ցուցիչները հնարավորություն չէին տալիս ճիշտ վերլուծություն կատարել, քանի որ շատ հաճախ անտեսվում էր կնոջ գործոնը: Այս լուրջ բացթողումը նկատվում էր ողջ աշխարհում և բացատրվում՝ որոշումների ընդունման մակարդակում տղամարդկանց բարձր ներկայացվածությամբ, որոնք ցանկացած հիմնահարցը լուծում էին «տղամարդիկ տղամարդկանց համար» սկզբունքով:

Գենդերային զգայուն ցուցիչների կիրառումը հնարավորություն է տալիս խուսափել կեղծ վերլուծություններից և կյանքի կոչել շատ կարևոր հանգամանք՝ **սեռային տարբերակմամբ տվյալների հավաքագրում ու մշակում**, որոնք խթանում են գենդերային զգայուն ցուցիչների ներդրումը և գենդերային զգայուն քաղաքականության մշակումը:

Գենդերային զգայուն ցուցիչները ոչ թե վերջնական նպատակ են, այլ չափող գործիք:

Գլուխ 5. Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչների օրինակներ

Սոցիալական ոլորտի գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ

Քանակական	Որակական
-----------	----------

Տնտեսապես ակտիվ բնակչությունն՝ ըստ սեռի	Մոցիալական ծառայություններից օգտվողների գոհունակությունը
Կանանց և տղամարդկանց գործազրկության մակարդակը	
Աշխատող կենսաթոշակատուների թվաքանակն՝ ըստ սեռի, կենսաթոշակի չափերը	
Աղքատության ցուցիչներն՝ ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի	

Կրթության ոլորտի զենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ

Քանակական	Որակական
Ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում՝ ըստ սեռի և մարզերի	Կրթամակարդակի և աղքատության բաշխվածության զենդերային պատկերը
Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում՝ ըստ սեռի և մարզերի	Կրթահամակարգից աղջիկների և տղաների դուրս մնալու պատճառները
Համախառն ընդգրկվածությունը նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ ըստ սեռի և մարզերի	
Կանանց տեսակարար կշիռը	

բարձրագույն ուսումնական հաստատությունների պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի թվաքանակում	
